

Հայոց մեծամասնութիւնն 1778 ին թողլով զՂրիմ գաղթերէն յԵկատարիսլաւ, մնացեալ սակաւաթիւ Հայք միաբանելով ընդ Փրանկաց կը խնդրեն ի Կատարինեայ Բ կայսրուհւոյ որ իրենց եկեղեցի շնորհուի այդ մզկիթը, որ ի Ժամանակին միւքֆի ձամխսի անունը կը կրէր: Կայսրուհին՝ որովհետեւ Թաթարք և Թուրքք, թողլով քաղաքը աւերակաց կոյտ մի՛ կը քաշուին կը հեռանան, անտէր և անժողովուրդ մնացած երկու մեծագոյն մզկիթներուն մին կը շընորհէ Ռուսաց, և միւսը՝ վերը յիշուաց միւքֆի ձամխսին՝ կաթողիկաց ընդհանրապէս: Կաթողիկք՝ չէնքին արտաքին ձեւընոյն կը պահեն, միայն մահկին տեղ խաչը փոխանակելով: Իսկ ներքին կողմը կը յարմարցընեն քրիստոնէական պաշտամանց պատշաճական արդուզարդին համեմատ, ի միջավայրին՝ ուր էր միհրապը, սուրբ սեղան մը կանգնելով ու Սստուածամօր պատկերը զետեղելով: Այս կարևոր փոփոխութենէն հինգ տարի վերջը, 1787 օգոստոսի 22 ին, մեծահանդէս չքով կ'օծէ զայն յեկեղեցի կաթողիկաց՝ Ռուսաստանի համօրէն կաթողիկաց մետրապօլիտն Ստանիսլաւ Գեր. Սեստրենցեւիչ Բողուչ:

Գեղեցիկ է աւագ խորանին ճարտարապետութիւնն. ինչպէս ընդհանրապէս սուրբ տաճարին չէնքը, նմանութիւն մը բերելով եւրոպական եկեղեցեաց, թէպէտեւ արուեստական անփառունակ պարզութեամբն շատ հեռի կը մնայ անոնցմէ: Ընտիր և ճաշակաւոր են նաև երկու կողմնական խորաններն՝ գոգաձեւերու մէջ ագուցած յորմին, գեղեցիկ և թանկագին պատկերներով. մին նուիրեալ յանուն սրբոյն Անտոնի Պատուացւոյ, և միւս սրբոյն Յովհաննու Նեպուսմուգին, երկուքն ալ նկարուած